

**Դատական Գործ N: ՎԴ/0783/05/10**

<b>Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:</b>	12-03-2010
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն:	Դ.Է.Լ.Վ ՍՊԸ
Հասցե:	Թումանյան 9
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Վլադիմիր
Ազգանուն	Վարդանյան
Հասցե	Կոմիտաս 55/27
<b>Պատասխանող</b>	
Անուն:	ՀՀ մտավոր սեփականության գործակալություն
Հասցե:	Կառավարական տուն 3
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	
<b>3-րդ անձ</b>	
Անուն:	Միշա Գասպարյան
Հասցե:	Սայաթ-Նովա 33/46
<b>3-րդ անձ</b>	
Անուն:	Հայ-Զինական համատեղ ձեռնարկություն Պեկին ՍՊԸ
Հասցե:	ք
<b>Պահանջ:</b>	27.04.07թ ապրանքային նշանը գրանցելու մասին որոշումը վիճարկելու, 12.02.10թ.ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը վիճարկելու և թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային նշանը գրանցել պարտավորեցնելու պ/մ
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	2.1
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	15-03-2010
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Արգիշտի Ղազարյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	

Որոշման ամսաթիվ:	19-03-2010
Ամսաթիվ:	12-03-2010
Պետ. տուրք (<< դրամ):	12000
Այլ նշումներ:	
Դատաքննության ամսաթիվ:	04-06-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	09-04-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	318
Դատաքննության ամսաթիվ:	14-07-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	04-06-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	318
Դատաքննության ամսաթիվ:	06-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	14-07-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:30
Նիստերի դահլիճի համար:	318
Դատաքննության ամսաթիվ:	12-11-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	01-10-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	318
Դատաքննության ամսաթիվ:	19-11-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	12-11-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	318
Դատաքննության ամսաթիվ:	09-12-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	19-11-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	318

Դատաքննության ամսաթիվ:	01-02-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	10-12-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	105
Դատաքննության ամսաթիվ:	23-02-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	01-02-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	105
Հայցի լուծման ամսաթիվ:	10-03-2011
Հայցի լուծումը:	Մատով բավարարվել է մատով մերժվել
<b>Հոդված</b>	
Հոդված	90, 112-113-115
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
<b>Դատական ակտ:</b>	<p>Վարչական գործ թիվ ՎԴ-0783/05/10 2011թ. Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 10 մարտի 2011թ. ք. Երևան</p> <p>Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը նախագահությամբ դատավոր Ա.Ղազարյանի, քարտուղարությամբ Հ.Պապիկյանի մասնակցությամբ հայցվոր «Դ.Ե.Լ.Վ.» ՍՊԸ ներկայացուցիչներ՝ Ս.Անյազյանի, Վ.Դարդանյանի, պատասխանող ՀՀ մտավոր սեփականության գործակալության ներկայացուցիչ՝ Ա.Աբգարյանի, երրորդ անձ «Միշա Գասպարյան» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Վ.Գրիգորյանի, երրորդ անձ «Հայ-Չինական համատեղ ձեռնարկություն «Պեկին» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Գ.Գալստյանի,</p> <p>դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Դ.Ե.Լ.Վ.» ՍՊԸ ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձինք՝ «Միշա Գասպարյան» ՍՊԸ, «Հայ-Չինական համատեղ ձեռնարկություն «Պեկին» ՍՊԸ՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 27.04.2007թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին և 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումները վերացնելու և ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու պարտավորեցնելու պահանջների մասին:</p>
	Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

«Դ.Ե.Լ.Վ.» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձինք՝ «Միշա Գասպարյան» ՍՊԸ, «Հայ-Չինական համատեղ ձեռնարկություն «Պեկին» ՍՊԸ՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 27.04.2007թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին և 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումները վերացնելու և ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանը 19.03.2010թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել էր վարույթ:

Հայցվորը դատարան ներկայացված հայցադիմումի լրացմամբ խնդրել է նաև ԴԱՀԿ ծառայությունից հոգուտ Սարիբեկ Նահապետյանի բռնազանձել հարկադիր պարապուրդի համար ամսական միջին աշխատավարձը՝ սկսած աշխատանքից ազատման օրվանից մինչև աշխատանքում փաստացի վերականգնելու օրը:

ՀՀ վարչական դատարանը 19.11.2010թ. որոշմամբ գործը նշանակել էր դատաքննության:

10.12.2010թ. հայցվորը հրաժարվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության 27.04.2007թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին որոշումը վերացնելու պահանջից:

Գործի դատաքննությունն ավարտվել է 23.02.2011թ-ին:

Հայցվորի փաստարկները և հիմնավորումները

«2.2. ՀՀ մտավոր սեփականության գործակալության 12.02.2010թ.

ապրանքային (սպասարկման) նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը վիճարկելու վերաբերյալ

2մ. 20091180 հայտով ապրանքային (սպասարկման) նշանի գրանցումը մերժելու մասին 12.02.2010թ. որոշումը (այսուհետ՝ Գրանցումը մերժելու մասին որոշում) ընդունելիս ՀՀ մտավոր սեփականության գործակալությունն անտեսել է ՀՀ օրենսդրության մի շարք պահանջներ՝ մասնավորապես»

2.2.1. Գրանցումը մերժելու մասին որոշման մեջ հղում չի կատարվում ապրանքային (սպասարկման) նշանը գրանցելու կամ գրանցումը մերժելու որոշում ընդունելու իրավասություն վերապահող դրույթին՝ այն է՝ «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի հոդված 10ի 1-ին կետի. «Փորձաքննության արդյունքների հիման վրա ընդունվում է որոշում՝ հայտարկված նշանը որպես ապրանքային նշան հայտում նշված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար գրանցելու կամ դրա գրանցումը մերժելու մասին» կամ ի կատարումն Օրենքի 10-րդ հոդվածի ընդունված՝ Կարգի կետ 117-ի («Ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը») առաջին մասին» որը սահմանում է « որ «Եթե օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան անցկացված փորձաքննության արդյունքում պարզվում է որ սույն կարգի 11-16-րդ կետերում նշված հիմքերից թեկուզ մեկի առկայության պատճառով հայտում նշված բոլոր ապրանքների համար հայտարկվող նշանը ենթակա չէ գրանցման» որոշում է կայացվում՝ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին»: Հետևաբար՝ տվյալ որոշումն ընդունվել է առանց այդ լիազորությունը վերապահող դրույթի վկայակոչման:

2.2.2. Գրանցումը մերժելու մասին որոշման մեջ նշվում է «որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները» որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ ցրանցման ներկայացված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին: Նշանը համարվում է այլ նշանի և շփոթելու աստիճան նման» եթե այն ընդհանուր առմամբ

գուգորդվում է դրա հետ չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ուստի« հայասրկվող «OLO SS1J1Ի1O» «ՀԻՆ ՊԵԿԻՆ» նշանը չի կարող գրանցվել« քանի որ այն շփոթելու աստիճան նման է 43-րդ դասի ծառայությունների համար ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված « BEIJING » «ՊԵԿԻՆ» («Միշա Գասպարյան» ՍՊԸ« ք. Հրազդան» մարզպետարանին կից վարչական շենք« Իք 11891) նշանին: Համակցված նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարբերի նմանության հարցը առանձին վերցված: Տվյալ դեպքում համեմատվող նշաններում բառային տարրը հանդիսանում է առաջնային ընկալման տարր« որի վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտադրումը: Հայտարկվող համակցված նշանի առաջնային ընկալման տարրը « OLD BEIJING » «ՀԻՆ ՊԵԿԻՆ» արտահայտությունն է« որն իր մեջ ներառում է « BEIJING » «ՊԵԿԻՆ» հակադրված ապրանքային նշանը: Կարգի 91-րդ կետի համաձայն« եթե գրանցված «BEIJING» «ՊԵԿԻՆ» ապրանքային նշանը« որի մեջ աշխարհագրական անվանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում« ապա այն չի կարող օգտագործվել այլ ապրանքային նշաններում»: Որոշման նշված ձևակերպումները անհիմն են« չեն համապատասխանում իրականությանը և չեն բխում ՀՀ օրենսդրության պահանջներից՝ հետևյալ պատճառաբանությամբ. 2.2.2.1. Այսպես« Գրանցումը մերժելու մասին որոշման մեջ նշվում է« որ «Նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան նման« եթե այն ընդհանուր առմամբ գուգորդվում է դրա հետ չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Այդուհանդերձ« երկու համակցված ապրանքային նշանների միջև գոյություն չունի որևէ ընդհանրություն: Տվյալ եզրահանգումը հիմնավորված կլիներ եթե ներկայացվեր հմ. 11891 ապրանքային նշանի հետ ընդհանուր առմամբ գուգորդվող բառապատկերային նմանություն ունեցող որևէ համակցված ապրանքային նշան« որը կրկններ կամ շփոթելու աստիճան նման կլիներ դրա պատկերաբառային կամ գունային լուծումներին« չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Օրինակ« տվյալ եզրահանգումը ճշմարտացի կլիներ« եթե գրանցման ներկայացվեր մուգ մոխրագույն հիմնապատկերի վրա պատկերված է չինական ոճի ծածկ« ուղղահայաց կարմիր կամ բալագույն հենքերով կանաչ կղմինդրանման տանիքով« որի եզրերին պատկերված են չինական ոճի չորս կարմիր լապտերներ« իսկ տանիքի վերին հատվածում կներառվեին նույն կամ նույնատիպ տառատեսակով և գույնով պատկերված են «ՀԻՆ ՊԵԿԻՆ» և «OLD BEIJING» կամ նույնիսկ «ՊԵԿԻՆ» և «BEIJING» բառերը« ինչը կհանդիսանար ապրանքային նշանի նմանակման (միմիկրիայի) դրսևորում« մոլորության մեջ կզցեր սպառողին և շփոթություն կառաջացներ ապրանքային նշանների միջև: Մինչդեռ« հայցվորի կողմից գրանցման ներկայացված և գործածվող ապրանքային նշանը պատկերվում է սպիտակ հիմնապատկեր ունեցող ուղղանկյան տեսքով« որի կենտրոնական մասում պատկերված է չինական ավանդական ճարտարապետական շինության ոճի վառ կարմիր երկհարկ շինություն« որի ճակատային մասում պատկերված են շինության հիմքից դեպի առաջին հարկի ծածկն սլացող վեց սյուներ: Պատկերված շինության առաջին հարկի հետևի պլանին« դրա« համապատասխանաբար աջ և ձախ կողմերում« պատկերված են ևս մեկական սյուներ: Ճակատային մասի երրորդ և չորրորդ սյուների ներքո պատկերված են աստիճաններ« որոնց վերևում փոքր-ինչ խորքում« պատկերված է շինության մուտքը: Շինության առաջին հարկի ծածկն ունի չինական ավանդական ճարտարապետությանը բնորոշ ծածկի ձև: Դրա աջ և ձախ կողմերը կորած են և ուղղված են դեպի վեր: Պատկերված շինության երկրորդ հարկն անմիջապես հենված է առաջին հարկի ծածկի վերին մասի կենտրոնական հատվածի վրա: Երկրորդ հարկի կենտրոնում պատկերված է քառափեղկ լուսամուտ: Պատկերված շինության երկրորդ հարկի ծածկը կրկնում է առաջին հարկի ծածկի ուրվագծերը: Այն ես ունի չինական ավանդական

ճարտարապետությանը բնորոշ ծածկի ձև: Դրա աջ և ձախ կողմերը կորած են և ուղղված են դեպի վեր: Պատկերված շինության երկրորդ հարկի ծածկի կենտրոնական հատվածից դեպի վեր է խոյանում եռանկյունաձև « գմբեթանման տանիքը: Պատկերված շինության աջ և ձախ կողմերից կարմիր գույնով պատկերված են ճյուղեր: Ուղանկյան ձախ կողմում սպիտակ հիմնապատտառի վրա պատկերված են «Հին Պեկին» արտահայտությունը բնորոշող երեք չինական հիերոգլիֆների սև գույնի ուղահայաց պատկերները: Պատկերանշանի ստորին հատվածում « ուղանկյան ամբողջ երկայնքով ձգվում է կարմիր գույնի երիզ « որի ձախ կողմում միմյանց ներքո պատկերված են "Old Beijing" և "CHINESE CUISINE" (մեծատաբերով) սև գույնի լատինատառ անգլալեզու արտահայտությունների պատկերները « իսկ աջ կողմում « Հին Պեկին» և «ՀԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» (մեծատաբերով) սպիտակ գույնի հայատառ արտահայտությունների պատկերները: Հետևաբար « պատկերային առումով « տվյալ երկու ապրանքային նշանները միմյանց հետ որևէ նմանություն չունեն: Նույնը վերաբերում է նաև երկու ապրանքային նշանների ուղղանկյունաձև հակառակ գունային լուծումներին « ՀՀ մտավոր սեփականության 11891 վկայագրում նշված ապրանքային նշանը պահպանվում է սև « բաց և մուգ բալագույն « սպիտակ « մոխրագույն « դեղին և կարմիր գունային համակցությամբ « մինչդեռ հայցվորի կողմից օգտագործվող ապրանքային նշանը հայտարկվում է կարմիր « սպիտակ և սև գույների համակցությամբ: Այս եզրահանգմանը կարելի է հեշտությամբ զալ նաև երկու ապրանքային նշանների տեսողական համադրման միջոցով:

2.2.2.2. Գրանցումն մերժելու մասին որոշման մեջ նշվում է « որ «Համակցված նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցը առանձին վերցված « ինչը « իրոք « բխում է Կարգի համապատասխան դրույթներից « և « մասնավորապես « որոշման մեջ չհիշատակված կետ 97ից « որը սահմանում է « որ «Բառային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային) « գրաֆիկական (տեսողական) և իմաստային (արտահայտած մտքի) « « այդուհանդերձ « Կարգի պահանջներին չհամապատասխանող պետք է համարել ապրանքային նշանի շփոթության աստիճանի նման լինելու վերաբերյալ փորձաքննությունը սոսկ Կարգի 98-րդ կետի 1-9 ենթակետերում սահմանված ձայնային նմանության հիման վրա « որը նույնպես թերի է անցկացվել:

Այսպես.

- ա) Կարգի 98-րդ կետը սահմանում է « որ. «Ձայնային նմանությունը հիմնականում որոշվում է հետևյալ հատկանիշներով
- 1) համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ.
- 2) նշանը կազմող մոտ հնչյունների մոտիկությամբ.
- 3) մոտ հնչյունների և հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.
- 4) համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ.
- 5) նշանի մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակով.
- 6) նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղով.
- 7) ձայնավորների կազմի մոտիկությամբ.
- 8) բաղաձայնների կազմի մոտիկությամբ.
- 9) նշանների համընկնող մասերի բնույթով.
- 10) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով « հատկապես բառային արտահայտությունների, այդ թվում ֆիրմային անվանումների մեջ: Այս դեպքում համընկնող վանկերի առկայության կամ մի նշանը այլ նշանի մեջ մտնելու դեպքում նմանության ծագման որոշիչ գործոն է համարվում համընկնող մասերի սկզբնական դիրքը: Շատ դեպքերում նշանների նման ճանաչման հիմք կարող է հանդիսանալ ինչպես սկզբնամասերի, այնպես էլ վերջնամասերի համընկնումը

տարբեր միջնամասերի դեպքում:

II) շեշտադրությամբ»:

Հմ. 11891 ապրանքային նշանի միակ բառային և ինքնուրույն պահպանության օբյեկտ չհանդիսացող տարրն են «ՊԵԿԻՆ» և «BEIJING» բառերը՝ մինչդեռ հայցվորի կողմից հայտարկվող և գործածվող ապրանքային նշանում ամրագրված բառային տարրերը հետևյալներն են «Հին Պեկին. ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» և «Old Beijing: CHINESE CUISINE»: արտահայտությունները: Հետևաբար՝ հնչյունային առումով Պատասխանողի կողմից գործածվող ապրանքային նշանի բառային տարրի միայն մեկ բաղադրատարրը՝ «Պեկին» և դրա անգլալեզու « Beijing » հոմանիշը հնչյունային առումով մոտ կամ համընկնող կարող են համարվել՝ այն պարագայում՝ երբ հնչյունային կապակցությունների միմյանց նկատմամբ դասավորվածությամբ՝ համընկնող վանկերի առկայությամբ և դրանց դասավորվածությամբ՝ նշանի մեջ պարունակվող վանկերի ընդհանուր քանակով՝ նշաններում համընկնող հնչյունային կապակցությունների տեղով՝ ծայնավորների կազմի մոտիկությամբ՝ բաղաձայնների կազմի մոտիկությամբ՝ նշանների համընկնող մասերի բնույթով՝ համընկնող մասերի սկզբնական դիրքով՝ սկզբնամասերի և վերջնամասերի համընկնման՝ ինչպես նաև շեշտադրությամբ դրանք լիովին տարբեր են: Բացի դրանից՝ Գրանցումը մերժելու մասին որոշման մեջ հաշվի չի առնվել այն հանգամանքը՝ որ «Հին Պեկին. ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» և « Old Beijing: CHINESE CUISINE» արտահայտություններում տրամաբանական շեշտադրումը դրվում է նաև՝ համապատասխանաբար՝ « ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» և «CHINESE CUISINE» բաղադրատարրերի վրա: Պետք է նշել նաև՝ որ Գրանցումը մերժելու մասին որոշման մեջ՝ ընդհանրապես՝ անդրադարձ չի կատարվել «ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» և « CHINESE CUISINE » արտահայտություններին՝ որոնք կազմում են տվյալ ապրանքային նշանի միասնական բառային տարրի բաղկացուցիչ մասը:

բ) Հմ. 11891 ապրանքային նշանում և հայցվորի կողմից հայտարկվող ապրանքային նշանում ամրագրված բառային տարրերի գրաֆիկական պատկերումը են աներկբայելիորեն վկայում է երկու ապրանքային նշանների միջև շփոթելու աստիճան նմանության բացակայության մասին: Համաձայն կարգի կետ 99ի.

«Գրաֆիկական նմանությունը որոշվում է հետևյալ չափանիշներով

- 1) ընդհանուր տեսողական տպավորությամբ.
- 2) օգտագործված տառանմուշների (շրիֆտի) տեսակով.
- 3) տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևով (օրինակ տպագիր կամ ձեռագիր՝ մեծատառ կամ փոքրատառ՝ ոճավորումը և այլն).
- 4) միմյանց նկատմամբ տառերի դասավորվածությամբ.
- 5) այբուբենով՝ որի տառերով գրված է բառը.
- 6) զբյւնով կամ գունային համակցությամբ»:

Հմ. 11891 ապրանքային նշանի բառային տարրի գրաֆիկական պատկերն ունի հետեյալ տեսքը. «ՊԵԿԻՆ» ե « BEIJING » բառերը պատկերված են բացառապես մեծատառերով՝ առավել հավանականորեն «Am Adver» տառանմուշների (շրիֆտի) գործածմամբ և կարմիր գույնով՝ մուգ մոխրագույն հիմնապատառի վրա՝ մինչդեռ հայցվորի կողմից հայտարկվող և գործածվող ապրանքային նշանում ամրագրված բառային տարրում «Հին Պեկին» և « Old Beijing » արտահայտություններն պատկերված են փոքրատառերով՝ բացառությամբ առաջին տառերի որոնք՝ լեզվաբանական կանոններին համապատասխան՝ մեծատառ պետք է լինեն՝ «Brush Script MT» շեղատառ՝ ձեռագրի տեսք ունեցող տառանմուշների (շրիֆտի) գործածմամբ և՝ համապատասխանաբար՝ սպիտակ և սև գույներով՝ կարմիր հիմնապատառի վրա՝ իսկ «ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» և « CHINESE CUISINE » արտահայտություններն պատկերված են մեծատառերով՝ «Arial unicode» տառանմուշների (շրիֆտի)

գործածմամբ և« համապատասխանաբար» սպիտակ և սև գույններով կարմիր հիմնապատառի վրա: Ելնելով նշված նկարագրությունից կարող ենք վստահորեն եզրակացնել« որ հայցվորի կողմից գործածվող ապրանքային նշանում առկա բառային տարրը գրաֆիկական պատկերման տեսանկյունից« մասնավորապես՝ ընդհանուր տեսողական տպավորությամբ« օգտագործված տառանունների (շրիֆտի) տեսակով« տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևով« ոճավորմամբ« միմյանց նկատմամբ տառերի դասավորվածությամբ և գույնով կամ գունային համակցությամբ« որևէ նմանություն չունի հմ. 11891 ապրանքային նշանի բառային տարրի գրաֆիկական պատկերի հետ« իսկ երկու տարբերանշանների միջև միակ գրաֆիկական նմանությունը պայմանավորված է միևնույն այբուբենների (հայերեն և լատիներեն) գործածությամբ:

գ) Անդրադառնալով հմ. 11891 ապրանքային նշանում և հայցվորի կողմից հայտարկվող և գործածվող ապրանքային նշանում ամրագրված ե բառային տարբերի իմաստային (արտահայտած մտքի) նմանությանը՝ անհրաժեշտ ենք համարում նշել« որ« համաձայն Կարգի 100րդ կետի. «Իմաստային նմանությունը որոշվում է հետևյալ հատկանիշների հիման վրա 1) նշանների մեջ դրված նման հասկացության« գաղափարի« մասնավորապես տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի. 2) նշանների տարբերից որևէ համընկնող տարրի« որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը. 3) նշանների մեջ դրված հասկացությունների« գաղափարների հակադրության»:

Հմ. 11891 ապրանքային նշանի բառային տարրը« ինչպես արդեն նշել ենք» սահմանափակվում է Չինաստանի ժողովրդական հանրապետության մայրաքաղաքի անունը հայերեն և անգլերեն լեզուներով վերարտադրող «ՊԵԿԻՆ» և « BEIJING » բառերով« որոնք որևէ այլ իմաստ կամ նշանակություն չեն արտահայտում« մինչդեռ հայցվորի կողմից գործածվող ապրանքային նշանի բառային տարրում «Հին Պեկին» արտահայտության օգտագործումն էական փոփոխություն է մտցնում «Պեկին» բառի ընկալման մեջ՝ վերագրելով վերջինիս պատմական« գեղարվեստական« գեղագիտական նոր երանգ և ասոցիացվելով հին քաղաքի« քաղաքի կենտրոնական մասի« միջնաբերդի հետ: Նշված արտահայտության մեջ «Հին» բառի առկայությունը լիովին այլ որակ է հաղորդում քննարկվող արտահայտությանը« ինչպես« օրինակ« «Եգիպտոս» և «Հին Եգիպտոս»« «Հունաստան» և «Հին Հունաստան»« «Աշխարհ» և «Հին Աշխարհ»« «Թբիլիսի» և «Հին Թբիլիսի» «Երևան» և «Հին Երեան» ն այլ արտահայտությունների պարագայում: Քանզի եթե «ՊԵԿԻՆ» ե «Հին Պեկին» եզրույթների միջև չլիներ իմաստային տարբերություն« ուրեմն այդպիսին չպետք է լիներ նաև« օրինակ« «Հռոմ» և «Հին Հռոմ» կամ «Աթենք» ե «Հին Աթենք» արտահայտությունների միջև: Բացի դրանից« Պատասխանողի կողմից գործածվող ապրանքային նշանի բառային տարրի մյուս բաղադրատարրը« այն է՝ «ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» և « CHINESE CUISINE » արտահայտությունները« և իրենց վրա են վերցնում բառային բաղադրատարրի տրամաբանակատ և իմաստային շեշտադրումը՝ սպառողին մատնանշելով« որ նա գործ ունի սննդամթերքով և ըմպելիքով ապահովման ծառայություններ մատուցող հաստատության հետ: Մինչդեռ հմ. 11891 ապրանքային նշանի պարագայում սպառողը ախալ հաստատության գործունեության բնույթի մասին որեէ աեղեկատվություն չի ստանում: Հետևաբար« Պատասխանողի կողմից (գործածվող ապրանքային նշանի բառային տարրի արտահայտած իմաստը) դրանում դրված նման հասկացության« գաղափարի« առանձին իմաստ ունեցող և տրամաբանական շեշտադրումն իր վրա վերցրած բաղադրատարրի առկայության« նշանում դրված հասկացությունների« գաղափարների հակադրության առումով որեէ նմանություն չունի հմ. 11891 ապրանքային նշանի բառային տարրի արտահայտած



իմաստի կամ նշանակության հետ:

Ամփոփելով ամբողջ վերը նշվածը՝ կարող ենք վստահաբար նշել՝ որ Պատասխանողի կողմից գործածվող ապրանքային նշանի և հմ. 11891 ապրանքային նշանի բառային տարրերի միջև չկա և չի կարող լինել շփոթելու աստիճան որեէ նմանություն:

2.2.3. Անդրադառնալով Գրանցումը մերժելու մասին որոշման մեջ այն ձևակերպմանը՝ ըստ որի՝ «Տվյալ դեպքում համեմատվող նշաններում բառային տարրը հանդիսանում է առաջնային ընկալման տարր» որի վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտադրումը:

Հայտարկվող համակցված նշանի առաջնային ընկալման տարրը «OLD BEIJING» «ՎԻՆ ՊԵԿԻՆ» արտահայտությունն է՝ որն իր մեջ ներառում է «BEIJING» «ՊԵԿԻՆ» հակադրված ապրանքային նշանը՝ անհրաժեշտ ենք համարում նշել՝ որ այն ևս խեղաթյուրում է հարցի էությունը: Այսպես՝ հայցվորի կողմից նշվող ապրանքային նշանում գերիշխող դիրք է գրադեցնում ոչ թե բառային՝ այլ պարկերային տարրը: Բառային տարրը կազմում է ապրանքային նշանի պատկերի մոտ 10-ից 15 %-ը՝ իսկ « OLD BEIJING » «Հին Պեկին» արտահայտությունները թե ծավալային՝ թե ընկալման աեսանկյունից հանդիսանում են տվյալ ապրանքային նշանի ամենակոչող տարրը: Հետևաբար՝ այն չի կարող ընկալվել իբրև հայտարկվող համակցված նշանի առաջնային ընկալման տարր:

2.2.4. Ինչ վերաբերում է Գրանցումը մերժելու մասին որոշման մեջ հիշատակված այն ձևակերպմանը՝ թե «Կարգի 91-րդ կետի համաձայն՝ եթե գրանցված « BEIJING » «ՊԵԿԻՆ» ապրանքային նշանը՝ որի մեջ աշխարհագրական անվանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում՝ ապա այն չի կարող օգտագործվել այլ ապրանքային նշաններում»՝ ապա անհրաժեշտ է նշել հետևյալը՝ որ նախ « ինչպես արդեն նշել ենք՝ հմ. 11891 ապրանքային նշանը իրավաչափ չէ՝ « BEIJING » «ՊԵԿԻՆ» անվանել՝ երկրորդ՝ «Հին Պեկին» արտահայտությունը չի հանդիսանում աշխարհագրական նշում և կարող է ինքնուրույն պահպանության օբյեկտ հանդիսանալ՝ երրորդ՝ Կարգի 91-րդ կետի վերջին պարբերության մեջ նշված դրույթը՝ ընդհանրապես՝ կիրառելի չէ տվյալ ապրանքային նշանի նկատմամբ՝ քանի որ այն կիրառելի է բացառապես «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով սահմանված պահանջներին համապատասխան գրանցված ապրանքային նշաններին» այն է՝ այն նշաններին՝ որոնք հանդիսանում են կամ պարունակում են՝ «աշխարհագրական նշում և գրանցման են ներկայացվել այնպիսի ապրանքների համար՝ որոնք չեն ծագել ավյալ աշխարհագրական նշանի տեղանքից» եթե այդ աշխարհագրական նշան օգտագործումը մոլորության մեջ է գցում սպառողին ապրանքների իրական ծագման վայրի հարցում»: Թեև «Հին Պեկին» արտահայտությունը՝ ինչպես արդեն նշվել է՝ չի հանդիսանում աշխարհագրական նշում՝ այդուհանդերձ՝ նույնիսկ եթե ընդունենք՝ որ դրանում գործածվել է աշխարհագրական նշում՝ ապա դրա օգտագործումը չի կարող մոլորության մեջ գցել սպառողին ապրանքների իրական ծագման վայրի հարցում՝ ուստիև չպետք է կիրառվեր նշված ապրանքային նշանի գրանցումը մերժելու որոշման մեջ: Նույնիսկ՝ եթե ընդունենք՝ որ տվյալ նորմը պետք է կիրառելի լինի տվյալ ապրանքային նշանի գրանցման հետ կապված հարաբերություններում՝ այն պետք է կիրառվեր ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից նաև հմ. 11891 ապրանքային նշանը գրանցելիս՝ իսկ գրանցումը մերժվեր արդեն իսկ գոյություն ունեցած՝ ավելի վաղ առաջնություն ունեցող և ՀՀ-ում իրավական պահպանություն ստացած՝ «Beijing 2008» բառային տարր ունեցող ապրանքային նշան: Հետևաբար՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը կամայականորեն է կիրառել Կարգի նշված նորմը և դրանով իսկ խախտել «Կարգաբարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 7ի 1-ին մասը՝ որտեղ հստակորեն սահմանվում է՝ որ «վարչական

մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ՝ եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք...»: Գտնում ենք՝ որ տվյալ պարագայում առկա փաստական հանգամանքները նույնական էին՝ թե հմ. 11891 ապրանքային նշանի« և թե հայցվորի կողմից հայտարկվող ապրանքային նշանի գրանցման ներկայացման պահին գոյություն է ունեցել հայտարկվող նույն 43-րդ դատով գրանցված» ՀՀ-ում իրավական պահպանություն ստացած ապրանքային նշան« որի մեջ աշխարհագրական նշումը (« Beijing 2008») կենտրոնական տեղ էր զբաղեցնում» ուստի« անհասկանալի է» թե ինչու մեկ դեպքում ապրանքային նշանը գրանցվել է իսկ մյուս դեպքում՝ ոչ: Այն պարագայում՝ երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ի 2-րդ մասի առաջին պարբերությունը հստակորեն սահմանում է՝ որ «Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով» ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով»:

2.2.5. Ի լրումն վերը նշվածի՝ անհրաժեշտ ենք համարում նշել՝ որ Գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունվել է ի խախտումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթների: ՀՀ մտավոր սեփականության գործակալության ապրանքային (սպասարկման) նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 53-ի հոդված 54-ի մաս 1-ի իմաստով՝ գրավոր վարչական ակտ է՝ որի նկատմամբ տարածվում են տվյալ Օրենքի համապատասխան դրույթները: Հետևաբար՝ գտնում ենք՝ Գրանցումը մերժելու մասին որոշումը՝ չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 55-ի մաս 4-ի« ա» «գ» «գ» «գ» «ժ» կետերում սահմանված՝ գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջներին՝ հետևյալ հիմնավորմամբ: Առաջին՝ հոդվածի նշված մասի «ա» կետի համաձայն՝ վարչական ակտը պետք է պարունակի՝ վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը՝ այսինքն՝ տվյալ ակտի պարագայում պետք է նշված լիներ «ՀՀ էկոնոմիկայի նախարարության ՀՀ մտավոր սեփականության գործակալություն» անվանումը՝ մինչդեռ տվյալ ակտի գլխամասում նշված է՝ «ՀՀ մտավոր սեփականության գործակալություն. Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժին» անվանումը: Երկրորդ՝ հոդվածի նշված մասի «գ» կետի համաձայն՝ վարչական ակտը պետք է պարունակի՝ ակտի լրիվ անվանումը՝ դրա ընդունման տարին՝ ամիսը՝ ամսաթիվը և համարը՝ մինչդեռ նշված որոշման ընդունման ամսաթվի մասին կարելի է դատողություններ անել միայն որոշման առաջին էջին առկա դրոշմակնիքում նշված ամսաթվից՝ 12.02.10թ. « իսկ որոշման համարն ընդհանրապես բացակայում է՝ չնայած դրոշմակնիքի վրա առկա «Հմ.» աղյուսակի: Երրորդ՝ տվյալ ակտում ըստ էության բացակայում են նշված հոդվածի մասի «գ» կետով նախատեսված ակտով ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս)՝ հայտը մերժելու մասին կարելի է դատողություն անել միայն որոշման վերնագրից և այն բողոքարկելու իրավունքի վերաբերյալ եզրափակիչ ձևակերպումներից: Ինչպես արդեն նշել ենք՝ որոշման մեջ նույնիսկ հղում չի կատարվում այն իրավական ակտերի վրա՝ որոնք վերապահում են նման որոշում կայացնելու իրավասություն: Եվ՝ վերջապես՝ չորրորդ՝ տվյալ ակտում՝ ի խախտումն « քննարկվող հոդվածի մասի «ժ» կետի բացակայում է ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը: Գտնում ենք՝ որ տվյալ դեպքում որոշման ներքո առկա դրոշմակնիքը չի կարող համարվել տիպալ մարմնի պաշտոնական կնիք այն պարզ պատճառաբանությամբ՝ որ ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի 14 1231-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ առևտրի և

տնտեսական զարգացման նախարարության ՀՀ մտավոր սեփականության գործակալության կանոնադրության» կետ 6ի համաձայն՝ «Գործակալությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և գործակալության հայերեն անվանմամբ կլոր կնիք...» « որը և պետք է դիտել իբրև տվյալ վարչական մարմնի պաշտոնական կնիք:

2.2.6. Ամփոփելով» վերը նշված փաստարկները՝ վստահաբար կարող ենք նշել» որ ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից Գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունվել է ի խախտումն «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի 1-ին կետի» «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 7ի» հոդված 55-ի մաս 4-ի» «ա» «գ» «գ» «և «ժ» կետերի» Կարգի կետ 117-ի առաջին մասի» ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը սխալ» միակողմանի և ոչ լիարժեք է կիրառել «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3րդ մասի «բ» կետի» կարգի 91րդ և 98-րդ կետերի դրույթները» անտեսել է Կարգի 97– րդ» 99-րդ և 100-րդ կետերի դրույթները» հետևաբար» ՀՀ վարչական օրենսգրքի հոդված 114-ի մաս 1-ի» կետ 1-ի ուժով» պետք է ամբողջությամբ անվավեր ճանաչվի:

2.3. ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը թիվ. 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային (սպասարկման) նշանը գրանցել պարտավորեցնելու պահանջների մասին

2.3.1. ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պարտավոր է գրանցել թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային (սպասարկման) նշանը հետևյալ պատճառաբանությամբ.

2.3.1.1. Հայցվորի կողմից հայտարկվող ապրանքային (սպասարկման) նշանը ներկայացվել է գրանցման «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ի և 6ի պահանջների պահպանմամբ» բացակայում են հոդված 11-ում և 12-ում նշված ապրանքային նշանի գրանցումը մերժելու բացարձակ և այլ հիմքերը: Տվյալ ապրանքային նշանի գրանցումը չի խախտում «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի հոդված 4ում շարադրված՝ այլ սեփականատերերի ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքները» չի խոչընդոտում վերջինիս կողմից դրանց բարեխիղճ օգտագործումը: 2.3.1.2. 11.02.2010թ. Հայցվորը» ի պատասխան իր 10.02.2010թ. նամակի» ստացել է «Հայ-Չինական համատեղ «Պեկին» ձեռնարկություն» ՍՊԸ-ից համապատասխան գրություն առ այն» որ Հայցվորի կողմից ՀՀ մտավոր սեփականության գործակալության գրանցմանը ներկայացված և «Հին Պեկին. ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» բառային տարրը պարունակող ապրանքային (սպասարկման) նշանը» որևէ կերպ չի առնչվում «Հայ-Չինական համատեղ «Պեկին» ձեռնարկություն» ԱՊԸի կողմից գործածվող ֆիրմային անվանման հետ՝ միաժամանակ տրամադրելով իր համաձայնությունը Հայցվորի կողմից «Հին Պեկին. ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» բառային տարրը պարունակող ապրանքային (սպասարկման) նշանը ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից գրանցելու» ինչպես նաև Հայցվորի կողմից այն որևէ այլ կերպ գործածելու համար: Տվյալ գրությունը Հայցվորի կողմից ներկայացվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը» սակայն» վերջինիս կողմից որոշում կայացնելիս հաշվի չի առնվել: Այն պարագայում» երբ հմ. 11891 ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման դեպքում այն առանցքային նշանակություն է ունեցել:

2.3.1.3. 11.03.2010թ. Հայցվորը ի պատասխան իր 24.02.2010թ. նամակի» ստացել է համապատասխան գրություն Միջազգային

օլիմպիական կոմիտեից առ այն» որ «ՄՕԿի տարբերանշանները» ի հարկ է « միտված չեն Օլիմպիական խաղերին չառնչվող կամ չվերաբերող նշանների գրանցման կամ օգտագործման արգելմանը: Վերլուծելով ավյալ հիմնահարցը» ես ցանկանում եմ հաստատել« որ ձեր հայտը չի առնչվում կամ չի վերաբերում Օլիմպիական խաղերին: Ձեր հայտում առկա «Պեկին» քաղաքի անվան վերարտադրությունն իրականում բավարար չէ նման առնչություն (կամ շփոթություն) առաջացնելու համար: Որպես ամփոփում« ՄՕԿ չի առարկում ձեր նշանի գրանցման դեմ (ինչպես ներկայացված է Հավելվածում)» (մեջբերում գրությունից):

3. Հայցվորի պահանջները  
Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության հոդված 18« 1-ին մասի» հոդված 19ի 1-ին մասի» 41.1 հոդվածի» ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3« 19« 64-66« 71-75 հոդվածների» «Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի« 3րդ մասի» հոդված 46ի դրույթներով՝ Ղատարանից հայցում ենք. ամբողջությամբ վերացնել ՀՀ մտավոր սեփականության գործակալության 12.02.2010թ. ապրանքային (սպասարկման) նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը՝ պարտավորեցնել ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը գրանցել թիվ. 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային (սպասարկման) նշանը:»:

**Պատասխանողի փաստարկները և հիմնավորումները**

«3. Հայցադիմումի «2. Հայցի պահանջների հիմքում դրված փաստերը եւ իրավական հիմքերը» վերնագրված բաժնի «2.2 ՀՀ մտավոր սեփականության գործակալության 12.02.2010թ ապրանքային (սպասարկման) նշանի գրանցումն մերժելու մասին որոշումը (այսուհետ տեքստում մերժման մասին որոշում ) վիճարկելու վերաբերյալ.» ամբողջ ենթակետի վերաբերյալ: Նախ նշեմ« որ կարգի 91-րդ կետի 2-րդ ենթակետի 5-րդ եւ 6-րդ պարբերությունները սահմանում են «Չպահպանվող տարրի առկայությունն ու դրա հորինվածքային կապերը մնացած տարրերի հետ ապահովում են տվյալ ապրանքային նշանի տարբերակող հատկությունը» սակայն չպահպանվող տարրն այլ սուբյեկտների կողմից եւս կարող է բարելավվել օգտագործվել: Այս դեպքում չպահպանվող տարրերը սպառողի մոտ չպետք է շփոթություն առաջացնեն տարբեր արտադրողների կամ դրանց արտադրանքի հարցում:

Մասնավորապես շատ կարեւոր է ապրանքային նշաններում աշխարհագրական նշումների ներառման հարցը այն դեպքերում« երբ առկա է արդեն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով սահմանված պահանջներին համապատասխան գրանցված ապրանքային նշան« որի մեջ աշխարհագրական անվանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում (օրինակ՝ Երեւանի կոնյակի գործարանի անունով թիվ 3192 գրանցում ունեցող պիտակի տեսքով ապրանքային նշանի/մնջ օգտագործված են «Երեւան» եւ «ЕРЕВАН» բառերը» որոնք պահպանությունից հանված են) եւ ծառայում է որպես տվյալ ապրանքի յուրատեսակ առետրային անվանում: Այս դեպքում մյուս տնտեսավարող սուբյեկտներն իրենց ապրանքային նշաններում կարող են օգտագործել «Երեւան» անվանումը (այդ թվում այլ լեզուներով)՝ նշելու համար իրենց գտնվելու կամ ապրանքի արտադրության վայրը« կամ իրենց ֆիրմային անվանումը» որի մեջ առկա է «Երեւան» անվանումը եւ այլ տվյալներ« սակայն նրանք ապրանքային նշաններում չեն կարող օգտագործել «Երեւան» անվանումը (այդ թվում այլ լեզուներով)» եթե այդ անվանումն օգտագործվում է որպես նույնատիպ ապրանքների առետրային անվանում (այսինքն այսպիսի ապրանքային նշանների գրանցումը ենթակա է մերժման):»« տվյալ դեպքում գործ ունենք

հենց վերը նշված նորմերով սահմանված նմանատիպ դեպքի հետ եւ փորձաքննությունը իրավացիորեն մերժել է հայցվորի կողմից ներկայացված ապրանքային նշանի գրանցումն՝ քանի որ այն պարունակում է «Պեկին» աշխարհագրական անվանումը՝ եւ այն՝ որ «Պեկին» բառի հետ գործածված է «Հին» ածականը՝ ապա այն աշխարհագրական անվանումից «Պեկին»-ը չի վերածում այլ անվանման: Որոշման մեջ նշվել է նաեւ կարգի 105.1-րդ կետի նորմը համաձայն որի «Համակցված նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցը առանձին վերցված» եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների այսպէս կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»՝ տվյալ դեպքում ակնհայտ է՝ որ «չինական խոհանոց» արտահայտությունը չի հանդիսանում առաջնային ընկալման տարր՝ թեւ «չինական խոհանոց» արտահայտությունը իր վրա կրում է որոշակի իմաստ՝ միեւնոյն է առաջնային ընկալման տարրը մնում է «Հին Պեկին» արտահայտությունը: Բառային տարրերը պարունակում են ծայնային եւ իմաստային առումներով շփոթելու ստիճան նմանություն կարգի 98-րդ կետի 10-րդ եւ 11-րդ ենթակետերով՝ քանի որ վիճարկվող ապրանքային նշանի «Պեկին» եւ «BEIJING» բառերը մտնում են հակադրված ապրանքային նշանի մեջ՝ եւ շեշտադրությունը վիճարկվող ապրանքային նշանի մեջ կրում են «Պեկին» եւ « BEIJING » բառերը՝ իսկ հակադրված ապրանքային նշանում «Հին Պեկին» եւ «OLD BEIJING» բառերը: Իմաստային առումով նշված տարրերը արտահայտում են նույն իմաստը՝ աշխարհագրական անվանում:

Նշեմ նաեւ՝ որ հայցվորի կողմից նշված շփոթելու աստիճանի նմանության համապատասխան նորմերի մեջբերումները չեն բացառում մերժման մասին որոշման հիմք հանդիսացած նորմերի կիրառությունը:

Վարչական օրենքի 7-րդ հոդվածի վերաբերյալ նշեմ՝ որ արդեն հիմնավորել են՝ որ « BEIJING 2008» ապրանքային նշանը՝ հանդիսանում է արտահայտություն՝ որը բնութագրում է 2008 թվականի օլիմպիական խաղերի հավաքական իմաստը՝ իսկ հայցվորի ապրանքային նշանում օգտագործվել է «Պեկին» աշխարհագրական անվանումը՝ ուստի նույնական փաստական հանգամանքներ տվյալ դեպքում բացակայում են:

Հայցվորը հայցադիմումում նշում է՝ որ խախտվել են «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաեւ վարչական օրենք) 55-րդ հոդվածի պահանջները: Նշեմ՝ որ վարչական օրենք 53-րդ հոդվածի համաձայն վիճարկվող մերժման մասին որոշումը վարչական ակտ չի հանդիսանում: Բացի դա՝ հայցվորը հայցադիմում ներկայացնելու համար իրավական հիմքերում հղում է կատարել օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի վրա՝ սակայն նշված նորմում փորձաքննության որոշումների վիճարկման մասին նույնիսկ խոսք իսկ չի գնում: Նշեմ նաեւ՝ որ կարգի 84-րդ կետի համաձայն «Ապրանքային նշանը գրանցումը մերժելու մասին որոշման մեջ հիմնականում նշվում են հետեւյալ տեղեկությունները 1) հայտի համարը, 2) հայտի ներկայացման թվականը, 3) կոնվենցիայով կամ ցուցահանդեսային առաջնությանը վերաբերող տվյալները (եթե դրանք կան), 4) հայտատուն, 5) ապրանքային նշանի պատկերը, 6) չպահպանվող տարրերի նշումը (եթե դրանք կան): Այս դեպքում բերվում են օրենքին եւ սույն կարգին համապատասխան ապրանքային նշանի տարրերի պահպանությունը մերժելու հիմքերը, 7) նշանի գույնը կամ գունային համակցությունը (եթե խնդրարկվում է գունավոր ապրանքային նշան), 8) ԱԾՄԴ դասերին համապատասխան խմբավորված ապրանքների ցանկը:» իսկ 85-րդ կետը սահմանում է՝ «Ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշման մեջ հիմնականում նշվում են սույն կարգի 84-րդ կետի 1՝ 2՝ 4 եւ 5 - թղ ենթակետերը եւ բերվում են օրենքին եւ սույն կարգին համապատասխան ապրանքային նշանի գրանցումը մերժելու

հիմքերը:» « այսինքն նշված որոշմամբ պահպանված են կարգի համապատասխան նորմի պահանջները:  
Ելնելով վերը նշվածից գտնում ենք» որ հայցադիմումի 2.2 բաժինը՝ իր 2.2.1-2.2.6 ենթակետերով« եւ 2.3 բաժինը անհիմն են եւ հայցադիմումի 2-րդ եւ 3-րդ պահանջները համապատասխանաբար գործակալության 12.02.2010թ ապրանքային նշանի գրանցումը մերժելի մասին որոշումը վերացնելու եւ գործակալությանը պարտավորեցնել 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային նշանը գրանցելուն պահանջները» պետք է մերժվեն:»:

«Միշտ Գասպարյան» ՍՊԸ փաստարկները և հիմնավորումները «7. Հայցվոր «Դ.Է.Լ.Վ.» ՍՊ ընկերությունն իր ՀՀ Մտավոր սեփականության գործակալության 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը ամբողջությամբ վերացնելու պահանջի հիմքում դրել է այն փաստը» որ թիվ 11891 գրանցման համարն ունեցող ապրանքային նշանը և իր կողմից օգտագործվող և ՀՀ Մտավոր սեփականության գործակալությունում հայտարկված «Հին Պեկին. ՉԻՆԱԿԱՆ ԽՈՎԱՆՈՑ» ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման չեն: Հայցվոր «Դ.Է.Լ.Վ.» ԱՊ ընկերության այս փաստարկն անհիմն է և չի համապատասխանում իրականությանը հետևյալ պատճառներով:

«Ապրանքային և սպասարկման նշանների» ապրանքների ծագման տեղանունների» 2000թ. մարտի 20-ի ՀՀ օրենքի 12 հոդվածի առաջին մասի առաջին ենթակետի համաձայն.  
«Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները» որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին»:  
«Հայտերի ձևակերպման մասին» կարգի 90 կետի 27-րդ ենթակետի համաձայն.

«Այն դեպքում» երբ ոչ պահպանունակ տարրը հորինվածքային կապ ունի մյուս պահպանվող տարրերի հետ կամ մտնում է բառային անվանման մեջ որպես դրա մի մաս» ապրանքային նշանը պահպանվում է իր ամբողջության մեջ՝ առանց առանձին պահպանություն ընձեռելու ոչ պահպանունակ տարրին: Օրինակ՝ ՄԱՀԿ-ի կողմից ծանուցված ապրանքային նշանի համար 443828 միջազգային գրանցման մեջ "PRES-DU-SPORT" արտահայտությունը պահպանվում է իր ամբողջության մեջ՝ առանց առանձին պահպանություն ընձեռելու " SPORT " բառին»:  
«Հայտերի ձևակերպման մասին» կարգի 91 կետի համաձայն.

«...Չպահպանվող տարրի առկայությունն ու դրա հորինվածքային կապերը մնացած տարրերի հետ ապահովում են տվյալ ապրանքային նշանի տարբերակող հատկությունը» սակայն չպահպանվող տարրն այլ սուբյեկտների կողմից եւս կարող է բարելավվել օգտագործվել: Այս դեպքում չպահպանվող տարրերը սպառողի մոտ չպետք է շփոթություն առաջացնեն տարբեր արտադրողների կամ դրանց արտադրանքի հարցում: Մասնավորապես» շատ կարևոր է ապրանքային նշաններում աշխարհագրական նշումների ներառման հարցը այն դեպքերում» երբ առկա է արդեն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի "բ" կետով սահմանված պահանջներին համապատասխան գրանցված ապրանքային նշան» որի մեջ աշխարհագրական անվանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում (օրինակ՝ Երեւանի կոնյակի գործարանի անունով թիվ 3192 գրանցում ունեցող պիտակի տեսքով ապրանքային նշանի մեջ օգտագործված են "Երեւան" եւ " EPEBAH " թառերը» որոնք պահպանությունից հանված են եւ ծառայում է որպես տվյալ ապրանքի յուրատեսակ առետրային անվանում: Այս դեպքում մյուս տնտեսավարող սուբյեկտներն իրենց ապրանքային նշաններում կարող են օգտագործել "Երեւան" անվանումը (այդ

թվում՝ այլ լեզուներով)՝ նշելու համար իրենց գտնվելու կամ ապրանքի արտադրության վայրը՝ կամ իրենց ֆիրմային անվանումը՝ որի մեջ առկա է "Երեւան" անվանումը եւ այլ տվյալներ՝ սակայն նրանք ապրանքային նշաններում չեն կարող օգտագործել "Երեւան" անվանումը (այդ թվում՝ այլ լեզուներով)՝ եթե այդ անվանումն օգտագործվում է որպես նույնատիպ ապրանքների առեւտրային անվանում (այսինքն այնպիսի ապրանքային նշանների գրանցումը ենթակա է մերժման)...)»:

«Հայտերի ձևակերպման մասին» կարգի 92 կետի առաջին և երկրորդ պարբերության համաձայն.

«Նշանը համարվում է այլ նշանին նույնական» եթե դրանք համընկնում են իրենց բոլոր տարրերով դրանց փոխդասավորվածությամբ՝ գույներով եւ մնացած առանձնահատկություններով:

Նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան մման՝ եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու մոտ առաջացնում է նույն պատկերի՝ բառի՝ գույների՝ դրանց համակցության՝ իմաստի ընկալման զգացողություն)՝ չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում՝ նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող՝ եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ դրանց մասը համընկնում են կամ կատարված են այնպես՝ որ՝ տեսնելով դրանցից մեկը՝ սպառողի մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին՝ որին ինքն արդեն առնչվել է: Պետք է հաշվի առնել՝ որ առանձին տարբերությունների առկայությունը սովորաբար որոշվում է անմիջական համեմատության արդյունքում՝ այդ նշանների այնպիսի տարբերություններով՝ որոնք էական դեր չեն կատարում նշանի ընկալման համար»:

Նշված նորմերից հետևում է՝ որ թիվ 11891 գրանցման համարն ունեցող ապրանքային նշանը և «Դ.Է.Լ.Վ.» ՍՊ ընկերության կողմից օգտագործվող և ՀՀ Մտավոր սեփականության գործակալությունում հայտարկված «Հին Պեկին. ԶԻՆԱԿԱՆ ԽՈՂԱՆՈՑ» ապրանքային նշանը շփոթելու աստիճան մման չեն կարող լինել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1. Եթե «ՊԵԿԻՆ» և «BEIJING» բառերը հորինվածքային կապ չունենան թիվ 11891 գրանցման համարն ունեցող ապրանքային նշանում պահպանվող տարրերի հետ.

2. թիվ 11891 գրանցման համարն ունեցող ապրանքային նշանում պահպանվող տարրերի հետ հորինվածքային կապ ունեցող ինքնուրույն պահպանության օբյեկտ չհանդիսացող «ՊԵԿԻՆ» և «BEIJING» բառերը և «Հին Պեկին. ԶԻՆԱԿԱՆ ԽՈՂԱՆՈՑ» ապրանքային նշանում «Պեկին» բառը 43-րդ դասի սպառողների մոտ չպետք է շփոթություն առաջացնեն տարբեր ծառայություններ մատուցողների կամ դրանց մատուցած ծառայությունների հարցում.

3. թիվ 11891 գրանցման համարն ունեցող ապրանքային նշանը և «Հին Պեկին. ԶԻՆԱԿԱՆ ԽՈՂԱՆՈՑ» ապրանքային նշանը մարդու մոտ չեն առաջացնում նույն պատկերի՝ բառի՝ գույների՝ դրանց համակցության՝ իմաստի ընկալման զգացողություն:

Նման պայմաններում մեր համոզմամբ ապրանքային նշանների ու ֆիրմա-յին անվանումների շփոթության աստիճանի մմանությունն ունի նաև ներդրվածի ստակական և ներդրվիզուալ բնույթ և հոգեբանները կարող են պատասխանել՝ թե արդյոք հատուկ գիտելիքներ չունեցող՝ սովորական սպառողները կշփոթեն դրանք՝ թե ոչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

կոնվենցիայի 6« Հայաստանի Հանրապետության

Սահմանադրության 18 հոդվածներով՝ խնդրում եմ՝ ՀՀ Մտավոր

սեփականության գործակալության 12.02.2010թ. ապրանքային

/սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը

ամբողջությամբ վերացնելու և ՀՀ Մտավոր սեփականության

գործակալությանը թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված

ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցել պարտավորեցնելու մասին պահանջներն ամբողջությամբ մերժել:»:

#### Ղատաքնությանը հաստատված փաստերը

- «Ղ.Ե.Լ.Վ.» ՍՊԸ-ն թիվ 20091180 հայտով ՀՀ մտավոր սեփականության գործակալության գրանցմանն է ներկայացրել ապրանքային նշան:
- ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը 12.02.2010թ. կայացրել է որոշում ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին:

#### Ղատարանի եզրահանգումները

Վարչական դատարանը գտնում է « որ հայցվորի փաստարկները և պնդումները « իրավական ակտերին վկայակոչումներն ու մեկնաբանությունները հիմնավոր են « համապատասխանում են դատարանի իրավական դիրքորոշումներին» որոնք հետևյալն են. «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» /Այսուհետ նաև Կարգ/ 92-րդ կետի համաձայն՝

Նշանը համարվում է այլ նշանին նույնական, եթե դրանք համընկնում են իրենց բոլոր տարրերով, դրանց փոխդասավորվածությամբ, զույններով եւ մնացած առանձնահատկություններով:

Նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան մեծ, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն՝ մարդու մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, զույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը:

Հայցվորը վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը՝ խնդրել է սույն գործի քննության նկատմամբ կիրառել ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. թիվ թիվ 3-2050 (ՏԴ) որոշումը:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝

4. Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ժանրակցիո փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Ուսումնասիրելով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. թիվ թիվ 3-2050 (ՏԴ) որոշումը՝ պարզվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը որոշման « Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումները» բաժնում մասնավորապես գրառել է հետևյալը.

« Բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ դատարանը, կիրառելով Կարգի 102-րդ եւ 103-րդ կետերը, ըստ էության "Armenia" ապրանքային նշանը համարել է ծավալային, անհիմն է, քանի որ Կարգի 105-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ համակցված նշանների նմանությունը որոշելիս օգտագործվում են Կարգի 102-րդ եւ 103-րդ կետերում թվարկված հատկանիշները, ինչպես նաեւ ուսումնասիրվում է հայտարկվող նշանի մեջ նույնական կամ մեծ տարրի զբաղեցրած տեղի (դիրքի) նշանակությունը:

Բողոք բերած անձի այն պնդումը, որ ապրանքային նշանը, հանդիսանալով համակցված ապրանքային նշան, իր մեջ պարունակում է բառային եւ պատկերային տարրեր, հետեւաբար այն պետք է համեմատել այլ համակցված նշանների, ինչպես նաեւ այլ բառային եւ պատկերային նշանների հետ՝ հաշվի առնելով բառային նշանների ձայնային եւ իմաստային նմանությունը եւ



պատկերային նշանների իմաստային նշանակությամբ նմանության հատկանիշը, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում հետեւյալ պատճառաբանությամբ: "Արմենիա" ապրանքային նշանի տարր համարվող "Արմենիա" բառը չպահպանվող տարր է եւ Կարգի 91-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքային նշանի գերիշխող մաս չի կարող հանդիսանալ: Հետեւաբար, այդ բառային տարրի համեմատությունը դիմողի կողմից հայտարկված "Armenia" ապրանքային նշանի "Armenia" բառային տարրի հետ, ապրանքային նշանների նմանության որոշման հարցում որեւէ էական նշանակություն չի կարող ունենալ, քանի որ բոլոր հայտատուները "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված՝ իրավական պահպանության ինքնուրույն օբյեկտ չհամարվող նշանների (չպահպանվող տարրերի) օգտագործման նկատմամբ հավասար իրավունքներ ունեն: Հակառակ պարագայում, կսահմանափակվի մյուս հայտատուների կողմից "Արմենիա" բառի օգտագործման իրավունքը, քանի որ յուրաքանչյուր դեպքում տարբեր հայտատուների կողմից "Արմենիա" բառի օգտագործման ցանկացած դեպքում կարող է հայտնաբերվել այդ բառերի իմաստային կամ հնչյունային (ձայնային) նմանություն: Հետեւաբար, այն համակցված նշանների համեմատության դեպքում, որոնց բաղկացուցիչ տարրեր են հանդիսանում բառային եւ պատկերային տարրերը, իսկ բառային տարրերի համեմատությունը էական նշանակություն չի կարող ունենալ ապրանքային նշանների նմանության որոշման հարցում, ըստ էության պետք է դեկավարվել պատկերային նշանների նմանության որոշման չափանիշներով, որոնք սահմանված են կարգի 102-րդ եւ 103-րդ կետերով: ՀՀ տնտեսական դատարանը, հետազոտելով եւ գնահատելով գործում առկա ապացույցները նշել է, որ "Ռիթերլոկ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայտարկվող՝ համակցված "Armenia" ապրանքային նշանը եւ "Բջնի" հանքային ջրերի գործարան" փակ բաժնետիրական ընկերության անվամբ գրանցված "Արմենիա" ապրանքային նշանը (նշանների արտաքին տեսքերով, նշանների միջեւ սիմետրիայի բացակայությամբ, պատկերների տեսքով եւ բնույթով, հայտարկված նշանների գույների եւ երանգների գուգադրմամբ, համեմատվող նշաններում մոտ պատկերների (տարրերի) միմյանց նկատմամբ դասավորվածությամբ) նույնական կամ շփոթության աստիճանի նման չեն, քանի որ բացակայում է նշված ապրանքային նշաններն ընդհանուր տեսողական տպավորությամբ սպառողի կողմից շփոթելու հնարավորությունը: Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի խախտում տնտեսական դատարանը թույլ չի տվել»:

ՀՀ վարչական դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006թ. թիվ թիվ 3-2050 (ՏԴ) որոշմամբ նկարագրված փաստական հանգամանքները նույնանման են սույն վարչական գործով առկա փաստական հանգամանքների հետ, հետևաբար ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն վարչական գործը քննելիս պարտադիր են ՀՀ վարչական դատարանի համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես. ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը /Այսուհետ նաև Գործակալություն/ մերժել է «Ղ.Ե.Լ.Վ..» ՍՊԸ կողմից 20091180 հայտով առաջարկված ապրանքային նշանի գրանցումը, քանի որ «ՀԻՆ ՊԵԿԻՆ» և «OLD BEIJING» շփոթելու աստիճան նման է 43-րդ դասի ծառայությունների ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված «ՊԵԿԻՆ» և «BEIJING» /«Միշա Գասպարյան» ՍՊԸ, ք.Հրազդան, մարզպետարանին կից վարչական շենք, թիվ 11891/ ապրանքային նշանին:

Ուումնասիրելով հայցվորի կողմից հայտարկվող ապրանքային

նշանը, պարզվում է, որ այն պատկերվում է սպիտակ հիմնապատճառ ունեցող ուղղանկյան տեսքով» որի կենտրոնական մասում պատկերված է չինական ավանդական ճարտարապետական շինության ոճի վառ կարմիր երկհարկ շինություն» որի ճակատային մասում պատկերված են շինության հիմքից դեպի առաջին հարկի ծածկն սլացող վեց սյուներ: Պատկերված շինության առաջին հարկի հետևի պլանին» դրա» համապատասխանաբար աջ և ձախ կողմերում» պատկերված են ևս մեկական սյուներ: Ճակատային մասի երրորդ և չորրորդ սյուների ներքո պատկերված են աստիճաններ» որոնց վերևում՝ փոքր-ինչ խորքում» պատկերված է շինության մուտքը: Շինության առաջին հարկի ծածկն ունի չինական ավանդական ճարտարապետությանը բնորոշ ծածկի ձև: Դրա աջ և ձախ կողմերը կորած են և ուղղված են դեպի վեր: Պատկերված շինության երկրորդ հարկն անմիջապես հենված է առաջին հարկի ծածկի վերին մասի կենտրոնական հատվածի վրա: Երկրորդ հարկի կենտրոնում պատկերված է քառափեղկ լուսամուտ: Պատկերված շինության երկրորդ հարկի ծածկը կրկնում է առաջին հարկի ծածկի ուրվագծերը: Այն ես ունի չինական ավանդական ճարտարապետությանը բնորոշ ծածկի ձև: Դրա աջ և ձախ կողմերը կորած են և ուղղված են դեպի վեր: Պատկերված շինության երկրորդ հարկի ծածկի կենտրոնական հատվածից դեպի վեր է խոյանում եռանկյունաձև» զմբեթանման տանիքը: Պատկերված շինության աջ և ձախ կողմերից կարմիր գույնով պատկերված են ճյուղեր: Ուղանկյան ձախ կողմում սպիտակ հիմնապատճառի վրա պատկերված են «Հին Պեկին» արտահայտությունը բնորոշող երեք չինական հիերոգլիֆների սև գույնի ուղահայաց պատկերները: Պատկերանշանի ստորին հատվածում» ուղանկյան ամբողջ երկայնքով ձգվում է կարմիր գույնի երիզ» որի ձախ կողմում միմյանց ներքո պատկերված են "Old Beijing" և "CHINESE CUISINE" (մեծատարերով) սև գույնի լատինատառ անգլալեզու արտահայտությունների պատկերները» իսկ աջ կողմում՝ «Հին Պեկին» և «ՉԻՆԱԿԱՆ ԽՈՒՄԱՆՈՑ» (մեծատառերով) սպիտակ գույնի հայատառ արտահայտությունների պատկերները:

Իսկ 43-րդ դասի ծառայությունների ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված ապրանքային նշանի ուսումնասիրությունից պարզվում է, որ այն սև հիմնապատճառի վրա պատկերված կղմինդրե ծածկեր են, որոնք մոխրագույն են, ձախակողմյան ծածկը իր չափերով ավելի փոքր է աջակողմյան ծածկից, այդ ծածկերի վերում պատկերված են՝ ձախից ՊԵԿԻՆ, իսկ աջից BEIJING բառերը, որոնք բալագույն են, ձախակողմյան կղմինդրե ծածկի տակից կախված են երկու լապտերներ, որոնք կարմիր գույնի են, աջակողմյան կղմինդրե ծածկի տակի միջնամասում պատկերված է չինական հիերոգլիֆների պատկերով ցուցանակ, որը սպիտակ ֆոնի վրա՝ կարմիր եզրագծերով, աջակողմյան և ձախակողմյան կղմինդրե ծածկերի հատման մասից և աջակողմյան ծածկի աջ անկյունից դեպի ներքև առկա են կարմիր գույնի սյուներ, իսկ այդ սյուների միջև՝ ծածկի աջակողմյան մասի ներքևում առկա ցուցանակի ետևի մասով անցնում են կարմին գույնի ծողեր:

Վերը նշվածը հաշվի առնելով և նկատի ունենալով ՀՀ վճարելի դատարանի իրավական դիրքորոշումը, ՀՀ վարչական դատարանը գտավ, այդ բառային տարրի համեմատությունը դիմողի կողմից հայտարարված «ՊԵԿԻՆ» և «BEIJING» ապրանքային նշանի բառային տարրի հետ, ապրանքային նշանների նմանության որոշման հարցում որևէ էական նշանակություն չի կարող ունենալ, քանի որ բոլոր հայտատուները "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված՝ իրավական պահպանության ինքնուրույն օբյեկտ չհամարվող նշանների (չպահպանվող տարրերի) օգտագործման նկատմամբ հավասար իրավունքներ ունեն: Հակառակ պարագայում, կսահմանափակվի մյուս հայտատուների կողմից «ՊԵԿԻՆ» և «BEIJING» բառի

օգտագործման իրավունքը, քանի որ յուրաքանչյուր դեպքում տարբեր հայտատուների կողմից «ՊԵԿԻՆ» և «BEIJING» բառի օգտագործման ցանկացած դեպքում կարող է հայտնաբերվել այդ բառերի իմաստային կամ հնչյունային (ձայնային) նմանություն: Այսինքն, համակցված նշանների համեմատության դեպքում, որոնց բաղկացուցիչ տարրեր են հանդիսանում բառային եւ պատկերային տարրերը, իսկ բառային տարրերի համեմատությունը էական նշանակություն չի կարող ունենալ ապրանքային նշանների նմանության որոշման հարցում, ըստ էության պետք է ղեկավարվել պատկերային նշանների նմանության որոշման չափանիշներով, որոնք սահմանված են կարգի 102-րդ եւ 103-րդ կետերով: Կարգի 102-րդ և 103-րդ կետերը սահմանում են Պատկերային եւ ծավալային նշանների նմանության որոշման կանոնը, մասնավորապես՝

102. Պատկերային եւ ծավալային նշանները համեմատվում են՝

- 1) պատկերայինների հետ.
- 2) ծավալայինների հետ.
- 3) համակցված նշանների հետ, որոնց կազմության մեջ մտնում են պատկերային

կամ ծավալային տարրեր:

103. Պատկերային եւ ծավալային նշանների նմանությունը որոշվում է

հետեւյալ հատկանիշներով՝

- 1) արտաքին տեսքով.
- 2) սիմետրիայի առկայությամբ կամ բացակայությամբ.
- 3) իմաստային նշանակությամբ.
- 4) պատկերի տեսքով եւ բնույթով (նատուրալիստական, ոճավորված, ծաղրանկարային եւ այլն).
- 5) գույների եւ երանգների զուգադրմամբ.
- 6) համեմատվող նշաններում մոտ եւ համընկնող պատկերների (տարրերի) առկայությամբ եւ միմյանց նկատմամբ դասավորվածությամբ.
- 7) նշանների համընկնող մասերի բնույթով.
- 8) նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով.
- 9) նշանների տարրերից (պատկերներից) որել է համընկնող տարրով (պատկերով), որն առանձին իմաստ ունի եւ որի վրա ընկնում է տրամաբանական

շեշտը:

ՀՀ վարչական դատարանը վերևում մանրամասն նկարագրել է հայցվորի կողմից հայտարկվող և 43-րդ դասի ծառայությունների ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված ապրանքային նշաններում պարունակվող տարբեր բնույթի բառային, պատկերային, ծավալային, գունային եւ այլ տարրերի համակցություններին, որպիսի պարագայում Ղատարանը գտնում է, որ դրանցում պարունակվող նշաններն իրենց արտաքին տեսքերով, նշանների միջեւ սիմետրիայի բացակայությամբ, պատկերների տեսքով եւ բնույթով, հայտարկված նշանների գույների եւ երանգների զուգադրմամբ, համեմատվող նշաններում մոտ պատկերների (տարրերի) միմյանց նկատմամբ դասավորվածությամբ նույնական կամ շփոթության աստիճանի նման չեն, քանի որ բացակայում է նշված ապրանքային նշաններն ընդհանուր տեսողական տպավորությամբ սպառողի կողմից շփոթելու հնարավորությունը, իսկ այդ պատկերներում առկա «ՊԵԿԻՆ» և «BEIJING» բառերն էլ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն, ապրանքային նշանների նմանության որոշման հարցում որել է էական նշանակություն չի կարող ունենալ:

Հետևաբար, ՀՀ վարչական դատարանը գտավ, որ հայցվորի կողմից հայտարկվող և 43-րդ դասի ծառայությունների ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված ապրանքային նշանները նույնական կամ շփոթության աստիճանի նման չեն, որպիսի

պարագայում Գործակալությունը հայցվորի կողմից հայտարկվող ապրանքային նշանի վերաբերյալ պետք է կայացնել ապրանքային նշանը գրանցելու մասին որոշում:

Այսպիսով, ՀՀ վարչական դատարանը գտավ, որ հայցը՝ թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային /սպասարկման/ նշանը ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը գրանցել պարտավորեցնելու պահանջի մասով, հիմնավոր է և ենթակա է բավարարման:

ՀՀ վարչական դատարանը միևնույն ժամանակ գտավ, որ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվորը ՀՀ մտավոր սեփականության գործակալության 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջի հիմքում դրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը՝ գտնելով, որ այն չի համապատասխանում վարչական ակտին ներկայացվող պահանջներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, եւ ուղղված է անձանց համար իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ձանաչելուն:

Նույն օրենքի 55-րդ հոդվածը սահմանում է գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները:

Հետևաբար որևէ որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որպես վարչական ակտ, կհամարվի այն դեպքում, երբ դա իր ձևով և բովանդակությամբ կհամապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածով սահմանված գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջներին և բացի դրանից, այն պետք է ընդունված լինի վարչական մարմնի կողմից հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, եւ ուղղված լինի անձանց համար իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ձանաչելուն:

Գործակալության 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ՝ մի կողմից այն չի համապատասխանում վարչական ակտին ներկայացվող պահանջներին /որոշման մեջ առկա չեն հետևյալ պարտադիր վավերապայմանները՝ ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս), ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս), ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս), ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը/, իսկ մյուս կողմից՝ այն ուղղված չէ հայցվորի համար իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ձանաչելուն:

Այսպիսով, Գործակալության 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումը չի համապատասխանում վարչական ակտին ներկայացվող պահանջներին, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հիմքով այն վերացնելու պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է Գործակալության 27.04.2007թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին որոշումը վերացնելու պահանջին, ապա Դատարանը գտավ, սույն վարչական գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի

	<p>1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն պետք է կարձել, քանի որ այդ պահանջից հայցվորը հրաժարվել է:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ, 112-րդ, 113-րդ, 115-րդ հոդվածներով, դատարանը</p> <p><b>Վ Ճ Ռ Ե Ց</b></p> <p>«Ղ.Ե.Լ.Վ.» ՍՊԸ հայցն ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձինք՝ «Միշա Գասպարյան» ՍՊԸ, «Հայ-Չինական համատեղ ձեռնարկություն «Պեկին» ՍՊԸ՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 27.04.2007թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին և 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումները վերացնելու և ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի.</p> <p>ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը պարտավորեցնել գրանցելու թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային /սպասարկման/ նշանը:</p> <p>Հայցը՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասով, մերժել:</p> <p>Վարչական գործի վարույթը՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 27.04.2007թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասով, կարձել:</p> <p>ՀՀ մտավոր սեփականության գործակալությունից հօգուտ «Ղ.Ե.Լ.Վ.» ՍՊԸ-ի բռնագանձել 4.000 /չորս հազար/ դրամ, որպես հայցը բավարարելու պահանջի մասով նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցում:</p> <p>Մնացած մասով պետական տուրքի հարցը համարել լուծված:</p> <p>Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և մինչև օրինական ուժի մեջ մտնելը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:</p> <p>Օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում վճիռը կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:</p>
<p><b>ԴԱՏԱՎՈՐ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ</b></p>	
<p><b>Ղատական ակտի ամսաթիվը:</b></p>	<p>10-03-2011</p>
<p><b>Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:</b></p>	<p>0</p>
<p><b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b></p>	<p>10-05-2011</p>
<p><b>Էջերի քանակը:</b></p>	<p>242</p>
<p><b>Գործին կից նյութեր:</b></p>	
<p><b>Այլ նշումներ:</b></p>	
<p><b>Ամսաթիվ:</b></p>	<p>10-05-2011</p>
<p><b>Էջերի քանակը:</b></p>	<p>242</p>
<p><b>Գործին կից նյութեր:</b></p>	
<p><b>Որ դատարան է ուղարկվել:</b></p>	<p>Վարչական վերաքննիչ</p>
<p><b>Ուր է ուղարկվել:</b></p>	

<b>Ելքի գրության համար:</b>	ԴԴԳ-Ե-29234/11
<b>Ամսաթիվ:</b>	11-05-2011
<b>Ղատական Գործ N: ՎԴ/0783/05/10</b>	
<b>Ամսաթիվ:</b>	11-04-2011
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն:	Միշա Գասպարյան ՍՊԸ
Հասցե:	Վ.Սարգսյան 26/1
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Սիմոն
Ազգանուն	Ֆարմանյան
Հասցե	Թոթովենցի 8/22.,47բն.
<b>Ում կողմից է բերվել բողոքը:</b>	3-րդ անձ
<b>Պետական տուրք:</b>	10000
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Բողոքարկվող ղատական ակտը:</b>	ըստ հայցի «Դ.Ե.Լ.Վ.» ՍՊԸ ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձինք՝ «Միշա Գասպարյան» ՍՊԸ, «Հայ-Չինական համատեղ ձեռնարկություն «Պեկին» ՍՊԸ՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության 27.04.2007թ. ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելու մասին և 12.02.2010թ. ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցումը մերժելու մասին որոշումները վերացնելու և ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը թիվ 20091180 հայտով գրանցման ներկայացված ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցելուն պարտավորեցնելու պահանջների մասին
<b>Գործի համարը:</b>	ՎԴ/0783/05/10
<b>Ամսաթիվ:</b>	13-05-2011
<b>Վիճակագրական տողի համարը:</b>	2.1
<b>Գործի համարը:</b>	ՎԴ/0783/05/10
<b>Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):</b>	242
<b>Գործը ստացվել է:</b>	Վարչական
<b>Ամսաթիվ:</b>	13-05-2011
<b>Նախագահող ղատավոր</b>	
Ղատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ

Դատավորի անուն:	Հովսեփ Բեդկյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	Լարիսա Սոսյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական վերաքննիչ
Դատավորի անուն:	Աշոտ Սարգսյան
<b>Այլ նշումներ:</b>	